ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

«ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման (EU4STED)» ծրագիր Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված ՔՀԿ-ների կոալիցիայի 3-րդ նիստ՝ Թառնհոլ ձնաչափով

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Վերլուծությունը մշակվել է « ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման (EU4STED) » ծրագրի շրջանակներում:
Ծրագիրն իրականացնում է «Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիա»՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:
Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն « Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիան» և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:
Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում են « Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիայի» տեսակետներն ու կարծիքները:

ԵՐԵՎԱՆ 2019

Վերլուծության կառուցվածքը

1.Ներածություն

2.Մեթոդաբանություն

3.ՀՀ-ում կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման մարտահրավերները և լուծման ուղիները

4. Առաջարկություններ

1.Ներածություն

2015-2017թթ. ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի օրենսդրական փոփոխությունների շնորհիվ ներդրումային ակտիվություն է արձանագրվել վերականգնվող էերգետիկայի (ՎԷ) ոլորտում: Հայաստանի համայնքները, չնայած Էներգախնայողության ազգային ծրագրում, Քաղաքապետնարի Դաշնագրով իրենց մշակած Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերում նախատեսած միջոցառումների, այս ՎԷ զարգացման ալիքին մասնակցեցին չնչին, իսկ որոշ համայնքներ ընդհանրապես անմասն մնացին: Դրա պատճառն այն է, որ ՎԷ կայանները առավել շահավետ են սեփական կարիքների համար շահագործման դեպքում և հնարավորինս մեծ մասշտաբի դեպքում: Իսկ մեծ մասշտաբների կայանների համար մինչև 1մՎտ հզորությամբ համակարգերի համար 2017 թ. հայտարարված Էլ.ցանցի կողմից գնման կանաչ սակագինը (46 դրամ/կՎտԺ) սառեցվեց, իսկ Մասրիկի 55 արևային կայանի հաստատված սակագինը 21 դրամ/կՎտԺ զգալիորեն նվազեցնում է ներդրումային գրավչությունը: Արդյունքում՝ այն համայնքները, պատրաստակամություն էին հայտնել ՎԷ համակարգերում ներդրումներ կատարելու, հայտնվեցին անորոշության մեջ:

Այս պարագայում փակուղուց հնարավոր ելք կարող է լինել, եթե մեծ համայնքային կայանները կարողանան էլեկտրաէներգիան արտադրել օրենսդրությամբ սահմանված «սեփական կարիքների համար» ձևաչափով, բայց «սեփական»-ը լինի ոչ թե տվյալ հաշվիչից օգտվող մեկ համայնքային աբոնենտը, այլ ցանկացած համայնքային ենթակայության ձեռնարկություն: Էներգետիկ կոոպերատիվի սկզբունքով աշխատելու դեպքում համայնքը կարող է արևային էլեկտրաէներգիայի փոխարինել ոչ միայն մեկ համայնքային շենքի կամ ձեռնարկության էներգասպառումը, այլև բաշխել արտադրած էլ.էներգիան ավելի մեծ թվով համայնքային ձեռնարկությունների ծախսերը փակելու:

Վերականգնվող էներգետիկան ՀՀ տարածքում Քաղաքապետների դաշնագիրը ստորագրած 18 համայնքների Դաշնագրից բխող Կայուն էներգետիկ (և կլիմայական) զարգացման ուղղությամբ պարտավորություններից լոկ մեկն է: Անդամակցած համայնքների համար չկա ծրագրերի մշակման և արդեն ընդունված ութ Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերի ուղղությամբ չկա վերահսկման ազգային միացյալ մեթոդական հարթակ: Ուստի ծրագրի բաղկացուցիչ մաս է նաև տեղեկատվական հարթակի ստեղծումը:

Միաժամանակ, հաշվի առնելով կանանց սահմանափակ դերը համայնքային էներգետիկ և կլիմայի փոփոխության մեղղման և հարմարվողականության քաղաքականության մեջ, ծրագրովվ առաջարկվում էր այս ոլորտում հանրային աշխատանքների գործընթացում (օրինակ՝պետական գնումներ) էներգարդյունավետություն և վերականգնվող էներգետիկայի զարգացումն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ դաշտում, ընդունված Կայուն էներգետիկ զարգացման ծրագրերի իրականցման ընթացքում ներգրավել համայնքներում առկա ակտիվ կին փորձագետներին և կազմակերպություններին ոլորտային հանրային քաղաքականությունների մշակման և (կամ) բարելավման ու ջատագովության նպատակով,

համայնքներում վերոհիշյալ հարցերի շուրջը հաշվետվողականության և մշտադիտարկման իրականացման նպատակով:

Այսպիսով, ելնելով վերոնշվածից, կարելի է եզրահանգել, որ ՀՀ-ում էներգետիկ ոլորտում առկա հիմնախնդիրներից են նաև՝

- Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների խոչընդոտները;
- Քաղաքապետների դաշնագրից բխող այլ պարտավորություն Կայուն էներգետիկ (և կլիմայական) զարգացման ծրագրերի մշակման և վերահսկման ազգային միացյալ մեթոդական հարթակի բացակայությունը;
- ՏԻՄ-երի էներգարդյունավետության նախաձեռնությունների մշտադիտարկմանն բարելավման անհրաժեշտությունը;
- Հանրային աշխատանքների գործընթացում (օրինակ՝ պետական գնումներ) էներգարդյունավետություն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ միջոցների լավագույն փորձի հիման վրա հանրային քաղաքականությունների մշակմանն(կամ) բարելավման ու ջատագովության անհրաժեշտությունը;
- Կանանց սահմանափակ դերը համայնքային էներգետիկ և կլիմայի փոփոխության մեղման և հարմարվողականության քաղաքականության մեջ:

Ուստի ,Էներգախնայողության աջակցման հիմնադրամ, Կանայք էներգատիկայում կլիմայում, Աջակցություն բարեփոխումներին և Մարդկային կապիտալի զարգացման կենտրոն ՀԿ-ները հանդես եկան կոալիցիայիով՝ <<ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման>>, վերոհիշյալ խնդիրներին հավանական լուծումներ առաջարկելու և ոլորտում տեղի ունեցող դրական զարգացումներին նպաստելու:

2. Մեթոդաբանություն

2019թ.ի մարտի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիայի 3-րդ նիստը: Հանդիպումը տեղի ունեցավ «Թաունհոլ» (Town Hall) ձևաչափով՝ նպատակ հետապնդելով ծավալել բաց քննարկում, ինչպես նաև վերհանել էներգետիկ ոլորտի հիմնահարցերը և Կոալիցիայի աշխատանքի հետագա կարիքները՝ հստակ սահմանված ուղղություններով:

Հանդիպումը բաղկացած էր հետևյալ մասերից.

- Առաջին մասը նվիրված էր Կոալիցիայի իրականացրած աշխատանքների ներկայացմանը և իրականացվելիք քայլերին:

- Երրորդ հատվածն ուղղված էր կոալիցիայի կարողությունների զարգամցմանը, կոալիցիայի քարտուղարության գործունեությանը, ինչպես նաև՝ ռազմավարական ծրագրերի մշակմանը:

Մասնառրապես խորքային քննարկումներ ընթացան են հետևյալ առանցքային թեմաների շուրջ.

1. Կառավարության զարգացման ծրագրից բխող միջոցառումներում կայուն էներգետիկայի և էներգաարդյունավետության գործողությունների ընդգրկումը, մասնակիցների տեսլականների ճշտգրտում;
2. Կոալիցիայի ֆոնդահայթհայթդման, ներքին զարգացման, կարողությունների հզորացման աշպատանքներին մասակիցների ներառում:

Հանդիպմանը մասնակցել են ինչպես Երևանի, այնպես էլ՝ մարզային կառույցների Կոալցիայի անդամները, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան ներկայացուցիչը, ՀՀ ազգային ժողովի ներկայացուցիչը Հայաստանի բիզնես կոալիցիայի նախագահը, , ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչներ և ոլորտային փորձագետներ:

3.ՀՀ-ում կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման մարտահրավերները և լուծման ուղղիները

I. ՀՀ կառավարության զարգացման ծրագրում էներգետիկ ոլորտի արտացոլումը

Հանդիպման ընթացքում ներկայացվեց՝

- ՀՀ կառավարության ծրագրի էներգետիկ ոլորտի միջոցառումները և առաջարկվող փոփոխությունները,
- ոլորտի օրենսդրական և քաղաքականության խնդիրները,
- «Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված ՔՀԿ-ների կոալիցիայի» կողմից մինչ այժմ իրականացված աշխատանքները:

Քննարկվեց կառավարության կողմից ներկայացվող էներգետիկայի ծրագիրը, որտեղ ընդգրկվել են նաև Կոալիցիայի առաջարկները: Կոալիցիայի կողմից

ներկայցվել էր 10 կետերից բաղկացած առաջարկ, ինչը մեկ սեղմագրով ներկայացվել էր մեկ պարբերությամբ, որտեղ զետեղվել են <<բանալի բառեր>>, մասնառրապես՝

1. *Էներգաարդյունավետություն,*
2. *Էներգախնայողություն,*
3. *համայնք՝ PPP ֆորմատ ապահովելու համար:*

Նշվեց, որ քննարկումներ են եղել կառավարության, համապատասխան գերատեսչությունների հետ: Քննարկվեցին կառավարության հատուկ գերատեսչությունների հետ միջգերատեսչական հավանական հատույթները, ինչպես նաև՝ այլ ոլորտների հետ էներգաարդյունավետության եզրույթները:

Մասնառրապես առաջարկվեց ՀՀ բնապահպանության, ինչպես նաև ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունների այն ստորաբաժիններին համատեղ առաջարկությունով հանդես գալ, որտեղ վերականգնվող էներգետիկան և էներգաարդյունավետ օգտագործումը կարևոր դիրքերում են:

Ուստի կոալիցիայի հետագա քայլերի վերաբերյալ առաջարկվեց ստորև նշվածը՝

- Պետք է սերտորեն աշխատել Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ՝ ապահովելու, որ կառավարության ծրագրին ներկայացված առաջարկները համապատասխանաբար իրենց տեղը գտնեն կառավարության ծրագրի միջոցառումների ցանկում:
- Հնարավորության դեպքում պետք է առաջարկել ռեսուրսարդյունավետության հետ կապված օրակարգային թեմաներ, թեև գիտակցելով, որ դա Էներգետիկայի նախարարության գործառույթներից դուրս է:

Նշվեց, որ «Արմենպրես» պետական լրատվական գործակալության հետ ստորագրվել է հուշագիր, և այն դարձել է Կոալիցիայի գործունեությունը լուսաբանող պաշտոնական գործընկերը: Լրատվական այս գործընկերը ևս կուժեղացնի Կոալիցիայի դիրքերը՝ առավելապես օբյեկտիվ, գրարգետ և լայնամասշտաբ ոլորտային տեղեկատվություն տարածելու միջոցով:

II. *Էներգաարդյունավետ ապրանքների և ծառայությունների հանրային գնումների գործընթացը և նոր մշակված «Էներգաարդյունավետ գնումների ուղեցույցը»*

Ներկայացրեց ***«Պետական գնումների մասին» ՀՀ օրենքի*** շրջանակներում ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների նկատմամբ

էներգաարդյունավետության պահանջների կիրառման ուղեցույցի նախագիծը: Ինչպես նաև նշեց, որ պետական գնումներ կատարողների մեծ մասն այդ համակարգի շատ մանրուքներին չեն տիրապետում, այդ պատճառով իսկ մշակվել է «Էներգաարդյունավետ գնումների ուղեցույց»-ը, որը պետական գնումներով զբաղվողներին ավելի պարզ լեզվով կբացատրի այդ գործընթացը:

Քննարկման ընթացում առաջարկվեց.

- Բոլոր անդամ ՔՀԿ-ները պետք է ուսումնասիրեն ուղեցույցի վերջնական տարբերակը և իրենց համապատասխան գործընկեր կառույցների, ՏԻՄ-երի հետ աշխատանքում խրախուսեն հանրային գնումներում ԷԱ պահանջների պահպանումը, ինչպես ներկայացված է ուղեցույցում:
- Ուղեցույցը նաև պետք է լայնորեն տարածել, որպեսզի մինչև ամենահեռավոր և ամենափոքր համայնքը, գնումների գործընթաց սկսելիս, պարզ պատկերացնի, թե ինչպես է ապահովելու ձեռք բերվող ապրանքի կամ ծառայության նվազագույն էներգածախսը՝ կյանքի ցիկլի ընթացում:

III. *Կոալիցիայի քարտուղարությունը, որպես Կոալիցիայի կարողությունների զարգացման և առաջ մղման, հետևաբար նաև ոլորտային հիմնախնդիրների լուծման աջակից*

Ներկայացվեց Կոալիցիայի կարողությունների զարգացման և ներքին փաստաթղթերի մշակման նախնական քայլերը և հետագա անելիքները ֆոնդահայթհայթման, ջատագովման, շահերի բախման բացառման, ինչպես նաև՝ զարգացման ռազմավարական տեսլականի մշակման ուղղությամբ:

Այս մասի առաջարկությունները հետևյալն էին՝

- Կոալիցիայի բոլոր անդամները պատրաստակամություն հայտնեցին մասնակցել արդեն պատրաստի փաստաթղթերի դիտարկմանը, դիտողությունների և առաջարկների ներկայացմանը, երբ կշրջանառվեն նախագծեր;
- Թեև Կոալիցիան նոր է և իր առաջին քայլերն է անում ոլորտի քաղաքականության, իրազեկման, հանրային վերահսկողության գործում, բայց ցանկալի է չձևավորվի դիտորդական վերաբերմունք, քանի որ Կոալիցիայի առաջմղման համար շատ գործիքներ հասուն են առանձին անդամներին, մասնառորապես՝ հանրային իրազեկման, տեղեկատվության տարածման, սոցիալական ցանցերում և իրենց հարթակներում Կոալիցիայի հետ կապված նյութերի տարածման ուղղությամբ:

4. Առաջարկություններ

<<Town Hall>> ձևաչափով հանդիպման արդյունքերը, որպես ոլորտային առաջմղման քայլեր, հետևյալն են՝

1. *Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ սերտ համագործակցություն ապահովելու, որ կառավարության ծրագրին ներկայացված առաջարկները համապատասխանաբար իրենց տեղը գտնեն կառավարության ծրագրի միջոցառումների ցանկում:*
2. *Հնարավորության դեպքում պետք է առաջարկել ռեսուրսարդյունավետության հետ կապված օրակարգային թեմաներ, թեև գիտակցելով, որ դա Էներգետիկայի նախարարության գործառույթներից դուրս է:*
3. *Ուսումնասիրվի Էներգաարդյունավետ գնումների ուղեցույցի վերջնական տարբերակը և իրենց համապատասխան գործընկեր կառույցների, ՏԻՄ-երի հետ աշխատանքում խրախուսեն հանրային գնումներում ԷԱ պահանջների պահպանումը, ինչպես ներկայացված է ուղեցույցում:*
4. *Էներգաարդյունավետ գնումների ուղեցույցը լայնորեն տարածվի, որպեսզի մինչև ամենահեռավոր և ամենափոքր համայնքը, գնումների գործընթաց սկսելիս, պարզ պատկերացնի, թե ինչպես է ապահովելու՝ ձեռք բերվող ապրանքի կամ ծառայության նվազագույն էներգածախսը՝ կյանքի ցիկլի ընթացում:*
5. *Կոալիցիայի բոլոր անդամների ակտիվ ներգրավվածությունն ապահովել արդեն պատրաստի փաստաթղթերի դիտարկմանը, դիտողությունների և առաջարկների ներկայացմանը, երբ կշրջանառվեն նախագծեր:*
6. *Թեև Կոալիցիան նոր է և իր առաջին քայլերն է անում ոլորտի քաղաքականության, իրազեկման, հանրային վերահսկողության գործում, բայց ցանկալի է չձևավորվի դիտորդական վերաբերմունք, քանի որ Կոալիցիայի առաջմղման համար շատ գործիքներ հասուն են առանձին անդամներին, մասնառորապես՝ հանրային իրազեկման, տեղեկատվության տարածման, սոցիալական ցանցերում և իրենց հարթակներում Կոալիցիայի հետ կապված նյութերի տարածման ուղղությամբ:*